

ՅՈՎԱԿԻՄ Վ. ԶՈՒՂԱՅԵՑԻ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԷՋՄԻԱՇՆԻ (1666—1720)

Ազգային բանասէրներու լուռն գրութիւններուն առիթ տուած է Էջմիածնի կաթողիկոս Աղեքսանդր Զուղայեցւոյ (Ճիշդ թուական 1706—1714) կղեմէս ԺԱ. Ս. Քահանայապետին գրած մէկ նամակը: Վեներտիկի Մխիթարեաններէն ոմանք զայն յիշատակած են իբր ի նպաստ միութիւնասէր ոգւոյ յիշեալ կաթողիկոսին, մինչ հակառակը պաշտպանած են անցեալ դարու նշանաւոր բանասէրներ: Եւ որովհետեւ կ'աւանդուի թէ Յովակիմ Արքեպ. Զուղայեցին նոյն նամակը Հռոմ բերած ըլլայ, հարկաւոր կը համարիմ յիշեալ նամակի մասին յուզուած խնդիրը լուծել՝ սկսելով ասկէ Յովակիմ Արքեպ.ի կենսագրութիւնը, մանաւանդ որ սոյն առթիւ կը ներկայանայ պատմութեան Յովակիմ Արքեպ.:

Աղեքսանդր կաթողիկոսի յիշեալ թուղթն առաջին անգամ կը յիշատակէ Յակոբ Վիլոդ հայագէտ Յիսուսեան, իր հրատարակած գրքերէն երեքին մէջ հետեւեալ կերպով: